ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 237

վարչական տուգանք նշանակելու մասին

12 հունիսի 2018թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար Հովհաննես Հայրապետյանս, քննելով «ՀԱՐԻ» ՍՊԸ-ի տնօրեն Ավագ Ադամյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի վերաբերյալ գործը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2018 թվականի ապրիլի 4-ի N 175-18 հանձնարարագրի համաձայն՝ «ՀԱՐԻ» ՍՊԸ-ում իրականացված ստուգման արդյունքում պարզվել և 2018 թվականի մայիսի 16-ի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ արձանագրվել է այն փաստը, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտվել են **«Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին, 6-րդ մասերի, 15-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի N 34-Ն որոշման հավելվածի 23-րդ, 25-րդ, 39-րդ, 55-րդ և 67-րդ կետերի** պահանջները. այն է՝

- արտադրական, առևտրի, օժանդակ, կենցաղային սենքերը չեն պահվում մաքուր, նորոգ և պատշաճ վիճակում.
- ապահովված էր կենցաղային տարածքներով (սանհանգույց՝ ձեռքերի լվացման և ախտահանման համար տեղադրված են լվացարաններ՝ սակայն ապահովված չէր հոսող տաք ջրով, օճառով, էլեկտրաչորացուցիչներով և (կամ) սրբիչով, ախտահանիչ լուծույթով, կախիչներով, հանդերձարանով՝ որտեղ հագուստը, սանիտարական հագուստը և կոշիկները պահվում են առանձին).
- բազմակի օգտագործման փաթեթավորման նյութերն ու բեռնարկղերը հեշտությամբ մաքրվող և ախտահանվող չեն.
- հացը և հացաբուլկեղենը չեն տեղափոխվում տաք հացաբուլկեղենի կոնտակտավորման համար թույլատրված տարաներով.
- սննդի շղթայում ներգրավված անձնակազմը ենթարկված չէր պարբերական բժշկական զննության.
- թողարկվող արտադրանքը չէր համապատասխանում դրանց որակը և անվտանգությունը սահմանող նորմատիվ իրավական ակտերին.
- արտադրողի կողմից չէր իրականացվում հումքի, պատրաստի արտադրանքի և տեխնոլոգիական գործընթացների լաբորատոր հսկողություն՝ որակի և անվտանգության ցուցանիշների նկատմամբ, ներարտադրական լաբորատորիայի կողմից կամ ըստ սահմանված կարգի հավատարմագրված լաբորատորիայի կողմից (պայմանագրային հիմունքներով):

Այսպիսով, հաստատվել է, որ սույն վարչական գործով առաջացած իրավախախտման համար պատասխանատու է «ՀԱՐԻ» ՍՊԸ-ի տնօրեն Ավագ Ադամյանը (հասցե՝ Արարատի մարզ, գ.Դաշտավան): Ավագ Ադամյանը վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամի մասին պատշաճ կարգով ծանուցվել է, սակայն գործի քննությանը չի ներկայացել և միջնորդություն չի ներկայացրել գործի քննությունը հետաձգելու մասին: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը ներկայացել է «ՀԱՐԻ» ՍՊԸ-ի տնօրեն Ավագ Ադամյանի կողմից լիազորված անձ՝ Վարդիթեր Վաչագանի Ասատրյանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 14-րդ, 35-րդ, 238[2]-րդ, 279-րդ, 281-րդ հոդվածներով՝ 188-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝**

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. «ՀԱՐԻ» ՍՊԸ-ի տնօրեն Ավագ Ադամյանի նկատմամբ նշանակել տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Տուգանքը վճարել թիվ 900005242822 գանձապետական հաշվին, **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի** համաձայն՝ որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքն առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում: Տուգանքի վճարումն ապացուցող բանկային անդորրագրի պատճենը սեղմ ժամկետում ներկայացնել ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի իրավաբանական վարչություն:

3. Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է՝ համաձայն **«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի**:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով **«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով** սահմանված ժամկետում (երկու ամսվա ընթացքում):

ՀՀ ԳՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Կ.Տ.